ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ-ի մարտի 4-ից 7-ը ներառյալ Հունգարիայի Հանրապետություն (ք. Բուդապեշտ) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, Ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Աննա Պետրոսյան - ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովման բաժնի գլխավոր մասնագետ

Լուսինե Սարգսյան – ՀՀ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության հարկերի և պարտադիր վճարների մեթոդաբանության թիվ 2 բաժնի գլխավոր հարկային տեսուչ

2. Գործուղման վայրը և ժամկետը՝

Հունգարիայի Հանրապետություն (ք. Բուդապեշտ), 2024թ-ի մարտի 4-ից 7-ը ներառյալ

3. Հրավիրող կողմը՝

Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպություն (IOTA)

4. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպության (IOTA) կողմից կազմակերպված՝ «Պարտապանների ավտոմատ տարանջատում՝ պարտքերի հավաքագրման արդյունավետությունը զարգացնելու նպատակով» խորագրով գործնական դասընթացին մասնակցելու արդյունքում հարկային պարտքի սեգմենտավորման մեջ կիրառվող նորարարական մեթոդների ու լուծումների ուսումնասիրության իրականացումն է՝ SS գործիքների կիրառման միջոցով: Հարկային պարտքերի (պարտապանների) ավտոմատացված սեգմենտավորումը կնպաստի ժամկետանց հարկային պարտքերի առաջացման կանխմանը և կբարելավի դրանց հավաքագրման գործընթացը:

5. Քննարկված թեմաները՝

«Պարտապանների ավտոմատ տարանջատում՝ պարտքերի հավաքագրման արդյունավետությունը զարգացնելու նպատակով»

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Դասընթացին ներգրավված էին Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպության (IOTA) անդամ 25 երկրներից 42 մասնակից:

Դասընթացներն ընթանում էին տեսական և գործնական փուլերով: Տեղի էր ունենում նաև փորձի փոխանակում:

Մասնավորապես, Բելգիայի Թագավորության, Էստոնիայի Հանրապետության, Հունգարիայի Հանրապետության, Իռլանդիայի Հանրապետության, Լիտվայի Հանրապետության, Նորվեգիայի Թագավորության, Իսպանիայի Թագավորության, Շվեդիայի Թագավորության ներկայացուցիչների կողմից ներկայացվում էին իրենց երկրում կիրառվող (նախատեսվող)՝ պարտապանների ավտոմատ սեգմենտավորման հետ կապված փորձը, որից հետո նախապես բաժանված 3 խմբերով իրականացվում էր քննարկում՝ խոսնակների կողմից ներկայացված հարցերի շրջանակներում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրած փաստաթղթերը:

Աշխատաժողովի շրջանակում կազմակերպված դեպքերի ուսումնասիրությունների և մասնակից պետությունների ներկայացուցիչների միջև անցկացված քննարկումների արդյունքում տրամադրվեցին մեծածավալ նյութեր, որոնք ստացված գիտելիքների և փորձի փոխանակման արդյունքում ավելի վստահ և արդյունավետ կկիրառվեն:

Միաժամանակ, լրացուցիչ հարցերի առաջացման դեպքում դրանք կազմակերպիչների միջոցով հնարավոր է ներկայացնել համապատասխան մասնակիցներին:

Հարկ է նշել նաև, որ պարտապանների ավտոմատ սեգմենտավորման թեմայով հանդիպումներ առաջիկայում ևս նախատեսվում են:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Ստացված գիտելիքները թույլ կտան ավելի արդյունավետ իրականացնել հարկային պարտավորությունների հավաքագրման գործընթացը, մշակել հարկային պարտավորությունների հավաքագրման նոր ռազմավարություն՝ ուղղված արդեն իսկ ներդրված ավտոմատացման համակարգում նոր չափանիշներ սահմանելուն ռիսկերի գնահատման, ինչպես նաև հարկային վարչարարությունն ավելի սեղմ ժամկետներում կազմակերպելու տեսանկյունից:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Աննա Պետրոսյան

Լուսինե Սարգսյան

12.03.2024թ.